2. Վաւերացուած սոյն դաշնագրի փոխանակութիւնը կատարուելու է Թիֆլիսում, երկու շաբաթուայ ընթացքում։

3. Ներկայ դաշնագիրը կազմում է երկու օրինակ»։*)

Երկու դաշնագրերն էլ վաւերացուեցին Հայաստանի Խորհրդարանի նոյեմբ. 11-ի նիստում և, փոխանակութիւնից յետոյ, մտան ոյժի մէջ։

Դրանից առաջ, օգոստ. 29—30-ին, անգլիացիների հեռանալու առթիւ, հայ ու վրացական պատուիրակութիւնների խորհրդաժողովում, զոր. Բիչի մասնակցութեամբ, մշակուել էր վարչական ձև Լոռիի չէզոք շրջանի համար։ Որոշուել էր 1) Չէզոք շրջանի վարչութիւնը թողնել խառն անգլիական սպայի ղեկավարութեան ու հակակշռի տակ. 2) Անգլիական սպայի բնակութեան վայր կարող է լինել Ալլահվերդին կամ Թիֆլիսը. 3) Չէզոք շրջանի վարչութեան ծախսերը բաժանւում են Հայաստանի և Վրաստանի միջև։ Սեպտ. 1-ին նոյն պատուիրակութիւնները որոշեցին 1) անփոփոխ թողնել չէզոք շրջանի հայ և վրացի զօրամասերի քանակն ու բնակութեան վայրը. 2) կազմել գինուորական մասնաղէտներից մի յանձնախումբ ստուգելու համար, թէ արդեօք 1919թ. յունւ.9—17-ին հաստատուած գիծը և զօրքերի դասաւորութիւնը պահպանուա՞ծ է։

Այս որոշումները հաստատուեցին Հայաստանի և Վրաստանի կառավարութիւնների կողմից և մտան ուժի մէջ, որով անգլիացիների հեռանալուց յետոյ էլ Լոռիի չէզոք շրջանը մնաց հայ-վրացական խառն իշխանութեան ներքոյ։

Սակայն, եթէ հայ-վրացական փոխյարաբերութիւնները, արագ կամ դանդաղ, քայլ առ քայլ բարելաււում էին, Ազրբէջանն ու Հայաստանը շարունակում էին մնալ թշնամի կողմեր. պաշտօնապէս պատերազմ չկար նրանց միջև, բայց փաստական վիճակը պատերազմից էլ վատ էր։ Հասկացողութեան գալու մի փորձ էր հայ-ազրբէջանեան խորհրդաժողովը, որ բացուեց Բաքւում, 1919թ. դեկտ. 14-ին։

Հայաստանի կողմից խորհրդաժողովի պատգամաւորներ էին նշանակուած Մ. Ցարութիւնեանը, Տ. Բէգզադեանը և Վ. Փափազեանը։ Վերջինիս հիւանդութեան պատճառով՝ փոխարինեց Ց. Արզութեանը, որ Բաքուի վրայով Թեհրան էր գնում, իբրև դեսպան։ Ազրբէջանեան պատգամաւորութեան կազմն էր՝ Ֆաթալի Խան Խոյսկի, Մամէդ Հասան Դաջինսկի և դոկտ. Վեքիլով։ Իբրև իրազեկ անձ, նիստերին ներկայ էր լինում և Խալիլ բէգ Խասմամեդովը։ Խորհրդաժողովի օրակարգն էր. 1) սահմանների հարցը, 2) երկաթուղային և առևտրական պայմանագրեր, 3) դաղթականների վիճակի կարգաւորում, 4) երկու հանրապետութիւնների քաղաքացիների դատաստանական-իրաւական յարաբերութիւնների և 5) հիւպատոսական հարցը։

Խորհրդաժողովը ունեցաւ 4 մասնաւոր խորհրդակցական և 2 հրապարակային նիստեր։ Ազրբէջանի ղեկավար շրջաններն ու կառավարութիւնը

---

*) Դաշնագրերը — ռուսերէն ու հայերէն — հրատարակուած են Հայաստանի խորհրդարանի «Օրէնքների Հաւաքածու»-ի 1919թ. դեկտ. 31 № 10-ում։